տում էին ձեռք բերել սրբավայրերի հովանավորությունը լեռնանցքներում վխտող ոգիների դեմ։ Զանգեզուրում այդպիսի մի սրբավայր էր մահմեդական Փիրդուդանը Ողջիի՝ Օխչի գյուղի դիմաց, որտեղից սկսվում է վերելքը Մեղրու (Մեղրի-Գյունեյի-Զավնդուրի-Արևիքի) շղթայի վրայով դեպի Տաշտունու (Դիբագլուի) լեռնանցքը՝ Մեղրիի գետահովիտն իջնելու համար։ Մի այլ ճանապարհ այդ սրբավայրի մոտից տանում է դեպի Կապուտջուղ՝ Կապուջիղ լեռնանցքը, որը տանում է Օրդուբադ—Ագուլիս։

Այդտեղ քառանկյունի պարիսպների մեջ կառուցված են մի քանի շենքեր, որոնց մեջ երկուսը մատուռներ են՝ գումբէթնէր։ Այդ մատուռներից ամենաընդարձակի մեջ կիսագնդաձև թաղով ծածկված կլոր սրահի հատակին ցույց է տրված փիրի[65] սուրբի գերեզմանը, որի վրա ուղևորները, թե՛ մահմեդական և թե՛ քրիստոնյա, մոմեր և ճրագներ էին վառում և հայցում սրբի օգնությունը՝ լեռնանցքը հաջող, անվտանգ անցնելու համար։ Մահմեդականների և քրիստոնյաների հավատալիքների և սրբավայրերի համընկնումն ապացուցում է, որ երկու կողմերի մտածելակերպը կապված էր նախաքրիստոնեական, նախամահմեդական հեթանոսական պաշտամունքի հետ։ Նրանց ակունքները կապված էին նախնական հասարակության միանման մտածելակերպի, մանավանդ բնության ուժերի և պտղաբերությանը նվիրված պաշտամունքների հետ։

Այդ լեռնանցքներում փչում են մշտական քամիներ, բարձրացնելով ձմեռվա ամիսներին ձյան փոշի. այդ բուք ու բորանի ժամանակ բազմաթիվ ուղևորներ թաղվել են ձյան ահագին կիտվածքի տակ։ Շենքերը քանդվելուց և ավերվելուց պահպանվում էին ոչ միայն մահմեդական, այլև քրիստոնյա բնակիչների նվիրաբերություններով։ Վայրը հավասարապես նվիրական էր երկու կրոնների հետևորդների համար էլ։ Հայ ծերունիները պատմում էին, որ այդտեղ թաղված է հայ ճգնավոր՝ սուրբ Դավիթը, որի գերեզմանը մահմեդականները սեփականել են, անունը փոխելով Դովդանի։ Փիր-Դովդանին, Փիրդուդանին՝ լեռնանցքի հարավում Մեղրու գետահովտի վերնագավառում համապատասխանում է Զվար քրիստոնեական տաճարը, որը մի բազիլիկաձև շենք է։ Սրա ուխտը Վարդավառին է։ Այդտեղ ևս այցելության էին գնում թե՛ քրիստոնյաները և թե՛ մահմեդականները, որոնք դեպի լեռնանցքը բարձրանալիս մոմեր էին վառում և աղոթում ճանապարհն անվնաս անցկացնելու համար։

Այսպիսով, նախնական մտածողությունն արևի առաջին շողերով ողողված լեռնագագաթները կապել էր նոր ծագող և իր վաղորդյան ճառագայթները սփռող արևի աստվածության հետ, իսկ լեռներում, մանավանդ լեռնանցքներում փչող քամիներն՝ այնտեղ վխտացող ոգիների հետ։ Գագաթների վրայից նախնական մարդն իր աղերսներն էր ուղղում ամբողջ զորությամբ ելնող արևին, ինչպես և նորածին երեխային գրկած՝ տատմերը կտուրը բարձրանալով և երեխան ցույց տալով արևին՝ նրա համար արևշատություն էր հայցում։ Նա լեռնային քամիների դեմ հովանավորություն էր որոնում լեռնանցքների ստորոտում թաղված գերեզմանների և հրաշագործ վայրերի մոտ։

---

[65] Փիր—pir—պարսկ. բառ է, նշանակում է ծեր՝ առաջնորդ, կրոնական միավորման գլուխ, սուրբ՝ որևէ արհեստի հովանավորող։